Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3403

891.71
9-36

№ 4/2 4/2

Ф. ш.

№ 29

891.71-3
Գ-36

ԱԶԳԱՆՇԱՆ

ՁԻՊ

Վ. ԳԱՐՇԻՆԻՆ

Հ. Հ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1922
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
№29
1002/6913

ԹԱՐԳ.

ԳԷԲԻԲԱՍ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Դ. Ռոսինեանցի։ Գոլովին. պող. № 41
1890

ВО 03

973

Дозволено цензурою. Тифлисъ, 13 ноября 1890 года.

Типографія М. Д. Ротиніанца. Голов. пр., д. № 41.

20 к

ԱԶԴ

Աչքի առաջ ունենալով մեր ներկայ ժողովրդական և մանկական ընթերցանութեան գրքերի զգալի պակասութիւնը՝ քաղցր պարտականութիւն համարեցի այս փոքրիկ վէպի հայերէն թարգմանութիւնը, առանձին գրքոյկով, նուիրել հայ մանկական և ժողովրդական ընթերցարաններին։

ԹԱՐԳ.

ՍԻՄԷՈՆ ԻՎԱՆՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍՆԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ 1866

ԱԶԴԱՆՇԱՆ

Սիմէոն Իվանովը երկաթուղու դծի վերայ պահապանի պաշտօն էր կատարում։ Նորա դիտանոցից (будка) մինչև երկաթուղու մի կայարանը տասն և երկու վերստ էր, իսկ մինչև միւսը—տասը։ Այդ դիտանոցից չորս վերստի չափ հեռաւորութեան վերայ անցեալ տարի հիմնել էին թել մանելու մի մեծ գործարան, որի բարձր ծխնելոյզը անտառի յետևից սևին էր տալիս. իսկ շրջակայքում բացի մօտակայ դիտանոցներից էլ ուրիշ ոչ մի բնակութիւն չը կար։

Սիմէոն Իվանովը մի հիւանդոտ ու մաշուած մարդ էր։ Ինը տարի առաջ նա եղել էր պատերազմում. սպաներից մէկի մօտ սպասաւորի պաշտօն էր վարել և ամբողջ պատերազմի ժամանակ նորա հետ էր անցկացրել։ Շատ անգամ նա քաղցած էր մնացել, և՛ ցրտից սառել—փէտացել էր, և՛ օրական քառասուն—յիսուն վերստ ոտով քարշ էր եկել տարուայ ամենացուրտ և ամենատաք եղանակներին։ Նորան շատ անգամ վիճակուել էր նոյնպէս յանախ գնդակների շառաչիւնի մէջ մնալ և, օգնութեամբն Ա-

տուծոյ, առանց մի որ և է վնասի դուրս գալ։ Նորան ոչ մի գնդակ չէր դիպել։

Մի անգամ մեր զօրագունդը կանգնած էր առաջին կարգին և մի ամբողջ շաբաթ շարունակ պատերազմում էր տաճիկների հետ։ Պատսպարանի այս կողմից՝ մեր զօրքը, իսկ միւս կողմից—տաճկացը՝ շարունակում էին առաւօտից մինչև երեկոյ անդադար հրացանաձգութիւնը։

Այդ զօրքի մէջն էր և Սիմէօնի իշխանաւոր սպան։ Ամենայն օր Սիմէօնը օրական երեք անգամ բերում էր նորա համար տաք ինքնաեռ և ճաշ՝ հեռու խոր ձորի մէջ գտնուած զօրքի խոհանոցից։ Ահա նա գնում է ինքնաեռը ձեռին՝ բաց դաշտի միջով։ Գընդակները վզզում են, զարնւում են քարին և ճայթիւն բարձրացնում։ Սարսափում է Սիմէօնը, արտասւում է, բայց և այնպէս առաջ է գնում։

Բոլոր սպաները նորանից շատ գոհ էին, որովհետև Սիմէօնի շնորհիւ նոցա համար միշտ պատրաստ էր տաք թէյը։

Վերջապէս ողջ, առողջ Սիմէօնը յետ դարձաւ պատերազմի դաշտից, միայն ձեռքն ու ոտքը սկսեցին մի տեսակ մրմնջալ և այդ բանը քիչ նեղութիւն չը պատճառեց խեղճին։ Վերադառնալով նա տուն, իւր ծերունի հօրը արդէն մեռած գտաւ։ Զորս տարեկան մի տղայ ուներ—նա էլ մեռել էր բկացաւից, մնացել էր միայն կինը. և ահա նա սկսեց կնոջ հետ միասին ճաշակել կեանքի բոլոր դառնութիւնները։ Սակայն նորան չը յաջողեց բարւոքել իւր ընտանեկան

դրութիւնը։ Բայց նա ինչպէս ուռած ոտք ու ձեռքով աշխատէր, երկիր հերկէր։ Հայրենի գիւղում նորանց ապրուստի ճանապարհը բոլորովին փակուած էր, ուստի գնացին օտարութեան մէջ բաղդ որոնելու։

Սիմէօնը իւր կնոջ հետ շատ տեղեր եղաւ. նա ապրեց և՛ Լինիայում և՛ Խերսոնում և՛ Դոնշչինում, բայց ամէն տեղ բաղդը նորանցից իւր երեսը դարձրեց։

Կինը մտաւ մէկի մօտ աղախին, իսկ ինքը առաջուայ պէս սկսեց թափառել։ Մի անգամ նա երկաթուղիով մի տեղ էր գնում։ Կայարաններից մէկում նորան թուաց թէ կայարանապետը ծանօթ մարդ է. Սիմէօնը աչքը չը դարձրեց նորանից։ Կայարանապետը նոյնպէս սկսեց անդադար նայել Սիմէօնի երեսին։ Նոքա ճանաչեցին միմեանց։ Բանից երևաց, որ կայարանապետն այն զօրագնդի սպաներիցն էր, ուր ծառայել էր Սիմէօնը։

—Դու Իվանովը չէ՞ս,—հարցրեց կայարանապետը։

—Այո՛, ձերդ ազնուութիւն, հէնց ես ինքս եմ։

—Այդ ո՞րտեղից որտեղ։

Սիմէօնը մէկ-մէկ պատմեց բոլորը։

—Իսկ այժմ ո՞ւր ես գնում։

—Ես ինքս էլ չը գիտեմ, ձերդ ազնուութիւն։

—Ի՞նչպէս թէ ինքդ էլ չը գիտես, յիմա՞ր։

—Այո՛, ձերդ ազնուութիւն, ինքս էլ չը գիտեմ, որովհետև չը գիտեմ ո՞ւր կորչեմ։—Անդործ եմ, ձերդ ազնուութիւն, գործ եմ փնտռում։

Կայարանապետը մտախոհութեամբ նայելով նո-

բա վերայ, ասաց.—գիտես ինչ կայ, բարեկամ, դու առժամանակ կաց այս կայարանում։ Կարծեմ, պսակուած ես, չէ՞. ուրեմն է կինդ։

—Այո՛, ձերդ ազնուութիւն, պսակուած եմ և կինս այժմ Կուրսկում մի վաճառականի մօտ աղախին է։

—Ուրեմն գրիր կնոջդ, որ անպատճառ գայ։ Ես կ՚աշխատեմ նորա համար ձրի տոմսակ ձեռք բերել։ Այստեղ երկաթուղու գծի վերայ պահապանի տեղ է բացուելու, ես կը խնդրեմ ձեզ համար այդ տեղը գծի կառավարչապետին։

—Շատ շնորհակալ եմ, ձերդ ազնուութիւն, պատասխանեց Սիմէօնը։

Սիմէօնը մնաց կայարանում։ Նա աշխատում էր կայարանապետի խոհանոցում. փայտ էր կտրտում, բակն ու տախտակամածն էր մաքրում։ Երկու շաբաթ չը քաշեց՝ կինն էլ եկաւ և Սիմէօնը իւր կնոջ հետ միասին գնացին իւրեանց նոր բնակատեղին—դիտանոցը։ Դիտանոցը նոր էր, տաք էր, իսկ փայտ—որքան կ՚ուզես. բացի այդ, նախկին պահապաններից մնացել էր մի փոքրիկ բանջարանոց և կէս դեսեատին մըշակելու հող՝ չորս կողմը մաքուր քաղհանած։ Սիմէօնը շատ ուրախացաւ և սկսեց մտածել, թէ ինչպէս իւր անտեսութիւնը կարգաւորէ և թէ ինչպէս կով, ձի առնէ։

Սիմէօնին տուեցին հարկաւոր գործիքները՝ կանաչ ու կարմիր դրօշակներ, լապտերներ, փող, մուրճեր, բանալիներ՝ պտուտակներն ամրացնելու, լինկ,

թի, ցախաւել, մեխեր և երկու գիրք, որոնց մէջ գրուած էին երկաթուղային կանոնները և գնացքների երթևեկութեան ցուցակը։

Սկզբում Սիմէօնը ամբողջ գիշերներ չէր քնում, անդադար կանոնագրութիւնը սերտում էր. երկաթուղու գնալուց դեռ երկու ժամ մնացած՝ նա շրջում էր իրեն յանձնուած երկաթագծի մասը. նստում էր դիտանոցի մօտ դանուած նստարանի վերայ և անդադար նայում ու ականջ էր դնում, թէ արդեօք չէ՞ն շարժւում երկաթուղու ձողակները, արդեօք չէ՞ լսւում երկաթուղու սուլոցը։ Վերջապէս նա բերան սերտեց ամբողջ կանոնագրութիւնը, թէև կարդում էր վատ—վանկ-վանկ, բայց և այնպէս էլի սովորեց։

Ամառն էր, գործի թեթև ժամանակը, կարիք չը կար ձիւնը մաքրելու։ Բացի այդ, թէև այդ ճանապարհով ամառ ժամանակ երթևեկութիւնն էլ այնքան յաճախ չէր լինում, բայց և այնպէս Սիմէօնը ամբողջ օրուայ մէջ մի երկու անգամ շրջում էր իւր մասը, տեղ-տեղ փորձում էր պտուտակները ամրացնել, թափած խճերը հաւասարացնել, ջրի խողովակները աչքի անցկացնել և ապա վերադառնում էր տուն ու իւր տնային գործերով զբաղւում։

Տնտեսութեամբ պարապելիս՝ միայն նա միշտ արգելքների էր հանդիպում. ինչ որ մտածում էր անել՝ բոլորի մասին հարկադրուած էր խնդրել գծի վարպետին. իսկ նա էլ իւր կողմից պիտի յայտներ գլխաւոր կայարանապետին և նորա իրաւունքն ստանար։ Այսպէս մինչև խնդրի տեղ հասնելը և պատասխան

ատանալը՝ ժամանակն էլ անցնում, գնում էր։ Այս հանգամանքը Սիմէոնին և կնոջը յաճախ տխրեցնում էր։

Անցել էր երկու ամսի չափ, երբ Սիմէոնը մտածեց ծանօթանալ հարևան պահապանների հետ։ Նորանց մէջ մի հին ծերունի ծառայող կար, որը հազիւ հազ կարողանում էր տնակից դուրս գալ. բոլորը մտադիր էին նորան հեռացնել։ Նորա պաշտօնը կինն էր կատարում։ Միւս պահապանը, որը կայարանին աւելի մօտ էր, մի նիհար ջղալինդ երիտասարդ մարդ էր. Սիմէոնը առաջին անգամ պատահեց նորան շրջագայութեան ժամանակ՝ երկու դիտանոցների մէջ տեղը գտնուած մի տափարակ տեղում։ Սիմէոնը առաւ գլխարկը և բարևեց։

—Բարի օր, հարևան, ասաց նա։

—Աստուծոյ բարին, պատասխանեց հարևանը՝ նորա վերայ խեթ-խեթ նայելով՝ երեսը շուռ տուեց ու գնաց։ Յետոյ նոցա կանայքը միմեանց պատահեցին։ Ողջունեց Սիմէոնի Արինան իւր դրացուհուն, բայց նա նոյնպէս երկար խօսել չը ցանկանալով՝ հեռացաւ։ Մի անգամ էլ Սիմէոնը պատահելով իւր հարևանի կնոջը, ասաց նորան. —Էդ ինչ չխօսկան մարդ ես ունեցել, քոյրիկ։

Կինը փոքր ինչ լռելուց յետոյ, պատասխանեց.

—Ախար նա ինչ խօսի քեզ հետ։ Ամէն մարդ իւր ցաւն ունի... Էհ, գնա բանիդ, եղբայր։

Սակայն մի ամսի չափ այս կերպ շարունակելուց յետոյ, նոքա մօտիկ բարեկամացան։ Յաճախ Սիմէոնն ու Վասիլը պատահում էին միմեանց, քաշ-

ւում էին մի կողմը, նստում, չիբուխ քաշելով՝ խօսում էին իրենց նիստ ու կացի մասին։ Վասիլը մեծ մասամբ լռում էր, իսկ Սիմէոնը շարունակ պատմում էր թէ իւր գիւղի և թէ իւր պատերազմում քաշած նեղութիւնների մասին։

—Է՛հ, քիչ տառապանք չեմ քաշել ես կեանքումս, ասում էր Սիմէոնը.—դուցէ իմ կեանքի մասին Աստուած էլ տեղեկութիւն չ՚ունենայ։ Է՛հ, եղբայր, մի մարդու որ Աստուած անբաղդ ստեղծի, հէնց անբաղդ էլ կ՚անցնի նորա կեանքը. ում ճակատին ինչ գրել է Աստուած, այն էլ կը կատարուի։ Այսպէս է, Վասիլի Ստեփանիչ, բաղդի բանը։

Իսկ այս միջոցին Վասիլի Ստեփանիչը՝ չիբուխը երկաթուղու ճողաքին զարկելով՝ դատարկեց և ոտքի կանգնելով՝ ասաց.

—Բաղդն ու անբաղդութիւնը չեն մեզ կեղեքողն ու թշուառացնողը,—այլ մարդիկ։ Աշխարհիս վերայ չը կայ մարդուց աւելի գիշատիչ, աւելի չար մի գազան։ Գայլը գայլին չի ուտում, բայց մարդիկ մարդոց ճնշում, ուտում են։

—Հէ՛, եղբայր, այդ մէկը սխալ ես. գայլը գայլին կ՚ուտէ։

—Ես այս ասում եմ իբրև օրինակ։ Բայց էլի կ՚ասեմ, որ մարդու նման անգութ արարած չը կայ։ Եթէ չը լինէին մարդկային անզթութիւններն ու ագահութիւնը—ապրելն էլ այսպէս դժուար չէր լինիլ։ Ամենքն էլ յարմար ժամանակից օգտուելով՝ աշխա-

տում են քեզ կենդանի յափշտակել և, ինչպէս մի պատառ հաց, կուլ տալ։

Սիմէօնը մտածմունքի մէջ ընկաւ։

—Ձը գիտեմ, եղբայր, դուցէ հէնց քո ասածի պէս է. իսկ եթէ այդ այդպէս էլ լինի, էլի Աստուածանից է։

—Է՛հ, դէ որ այդպէս է, նեղացած պատասխանեց Վասիլին, իմ քեզ հետ խօսելն էլ աւելորդ է։ Եթէ ամէն մի անպիտանութիւն Աստուծու վերայ դցենք, իսկ մենք ինքներս հանգիստ մեր տեղը նըստենք ու համբերենք—էլ ի՞նչ մարդիկ ենք մենք. այդ չի նշանակում մարդ լինել, այլ անասուն։ Հասկացար։ Ահա այս է քեզ իմ վերջին խօսքը։

Եւ Վասիլին, առանց մնաս բարև ասելու, թողեց հարևանին ու գնաց։ Սիմէօնն էլ կանգնեց տեղից։—«Հարևան, հարևան, էլ ինչու՞ ես նեղանում,—սկսեց յետևից կանչել Սիմէօնը։ Բայց հարևանը յետ չը նայեց, գնաց։ Երկար ժամանակ նայում էր Սիմէօնը նորա յետևից, մինչև որ նա ծածկուեց փորած հողի բլուրների յետևը։ Վասիլին դարձաւ տուն և պատմեց կնոջը.

—Է՛հ, Արինա, մեր հարևանն էլ մի մարդ չէ եղել։ Ի՞սկ դնբօ է եղել—ոչ թէ մարդ։

Սակայն երկու հարևանները միմեանցից չը խըռովեցան, կրկին անգամ միմեանց պատահեցան և սկսեցին առաջուայ պէս զրուցել բոլոր ժամանակ նոյն նիւթի վերայ։

—Է՛հ, եղբայր, մարդկանց արարմունքը որ չը

լինէր՝ խօ մենք էլ քեզ հետ այս դիտանոցներում ընկած չէինք լինիլ,—ասաց Վասիլին։

—Ի՞նչ պակաս են դիտանոցները.....ոչինչ, ապրել կարելի է։

—Ապրել կարելի է, այո՛, ապրել կարելի է....

—Է՛հ, ինչ ասեմ. տեսնում եմ երկար ես ապրել՝ քիչ օգտուել, շատ ես տեսել՝ քիչ կերել։ Աղքատ մարդը դիտանոցում, կամ մի այլ տեղ, ինչ կեանք պիտի ունենայ. ուտում են քեզ այդ կեղեքիչները. ծծում են բոլոր հիւթդ, իսկ երբ հասակդ առնում ես կամ ծերանում, դուրս են գցում, ինչպէս մի անպէտք կերակուր, խոզերին։—Դու ո՞րքան ռոճիկ ես ստանում։

—Է՛հ, շատ քիչ, Վասիլ Ջան, —12 բուբլի։

—Իսկ ես տասն և երեք ու կէս։ Դէհ, հիմա ասա խնդրեմ, ինչու՞ ես այդքան պիտի ստանամ։ Կանոնադրութեան համաձայն՝ մենք բոլորս էլ հաւասար պիտի ստանանք—ամսական 15 բ. ռոճիկ, վառելիք և լուսաւորութիւն։ Ախար, ասա խնդրեմ, այդ ո՞վ է կարգադրել, որ ինձ ու քեզ 12 բ. կամ 13 բ. տան.... Եւ դու ասում ես՝ ապրել կարելի է։ Պէտք է իմանաս, որ այստեղ բանը մէկ բուբլի ու կէսում կամ երեք բուբլիումը չէ. ասենք թէ հէնց բոլոր 15 բուբլին էլ տալիս են. բայց ինչ փող է 15 բուբլին։

—Ի՞նչպէս։

—Ա՛յ ինչպէս. անցեալ ամսին ես կայարանումն էի, այդ օրը սպասում էինք ճանապարհների

տեսչի գալուն. ես էլ պիտի տեսնէի և պատիւ ունեցայ տեսնելու։ Փոքր ժամանակից յետոյ, տեսուչը առաջ-փառաջ նստած առանձին վագոնում՝ հասաւ կայարան, դուրս եկաւ վագոնից, կանգնեց տախտակամածի վերայ և մի խոժոռ հայեացք ձգեց իւր շուրջը։ Բայց էհ, ինչ եմ երկարացնում.... Միևնոյն է, ես այստեղ երկար մնացող չեմ, կը գնամ, կը հեռանամ այստեղից. կը հեռանամ, ուր Աստուած կը յաջողի։

—Ինչի՞, եղբայր, ուր պիտի գնաս։ Ինչի՞ Աստուծու տուածից փախչում ես։ Այստեղ դու քեզ համար ունիս և՛ տաք տուն, և՛ մշակելու հող, կինդ էլ, փառք Աստուծոյ, աշխատաւոր կին է.....

—Հող, մի տես այդ ասած հողդ է. այդ ինչ հող է. այդ հող չէ այժմ, այլ չոր ու ցամաք մի անապատ։ Գարնանը կաղամբ ցանեցի այդտեղ, այն էլ երկաթուղու գծի վարպետը տակահան արաւ։ Եկաւ, «այդ ինչ է», —ասաց, — «ինչու՞ առանց յայտնելու, ինչու՞ առանց թոյլտուութեան ցանել ես։ Պոկոտիր այս րոպէս, հոսն անգամ չը լինի»։ Հարբած էր, եղբայր, ուրիշ անգամ ոչինչ չէր ասիլ, բայց այս անգամ արբեցողութիւնը իւր գագաթնակէտին էր հասել—կատաղած գոռաց.... «երեք րուբլի էլ տուգանք ....

Վասիլին յանկարծ լռեց, չիբուխը դրաւ բերանը, ուժգին ծուխը ներս քաշեց ու կամացուկ ձայնով ասաց.—Հէնց էնա արիւնը աչքերս էր կոխել,

եթէ մի ծպտուն էլ հանէր, պիտի տեղն ու տեղը փշրէի, բայց....

—Օ՛օ՛օ՛, հարեւան, ինչ շատ տաքարիւն մարդ ես եղել։

—Չէ, եղբայր, այստեղ տաքարիւնութեան բան չը կայ, ինչ ասում եմ, ուղիղն եմ ասում, ճշմարիտն եմ ասում։ Դեռ թող մի տպասի այդ կարմրաբերեանը, կը տեսնէ թէ ինչ կ'անեմ. կարծում է, թէ իմ ձեռքից ազատուել է. ոչ։ Երբ որ կայարանապետին կը գանգատուեմ՝ այն ժամանակը նա կը տեսնի։

Եւ արդարև Վասիլին իւր ասածը կատարեց, գանգատուեց։

Մի անգամ կայարանապետը պիտի անցնէր ճանապարհը դիտելու համար, որովհեաև երեք օրից յետոյ Պետերբուրգից պիտի գային բարձրաստիճան մարդիկ՝ ճանապարհը քննելու։ Մինչև նոցա գալը կայարանապետը ամէն բան կարգի դցել տուեց. փոսերը լցրին—հաւասարեցրին, պատառները վերանորոգեցին, նեցուկները և պոռտակները ամրացրին, սիւները ներկեցին. անցնելու տեղերում հրամայուած էր աղիւսի դեղին աւազ շաղ տալ և այլն։ Հարեւան պահապանի կինն էլ իւր ծերուկին դուրս քաշեց տնակից և սովորեցրեց, որ ճանապարհի խոտն ու մացառները պոկատի։ Մի ամբողջ շաբաթ Սիմէոնը աշխատեց, բոլորը կարգի բերեց և իրան էլ շնորհքի դցեց. հագի բաճկոնը մաքրեց, կարկատեց. իսկ կրծքի պղնձի կլոորը աղիւսով այնքան սրբեց, որ պլըպլըլում էր։ Անպադար աշխատում էր նոյնպէս և Վասիլին։ Կա-

յարանապետը դրեզինով էր մանգալիս ճանապարհը դիտելու։ Զորս մշակ առաջ էին մղում մեքենան. մեքենան գոռալով առաջ էր թռչում, մի ժամում 20 վերստ անցնելով։ Մեքենան հասաւ Սիմէօնի դիտանոցին. առաջ վազեց Սիմէօնը, զինուորականի նըման հարկաւոր տեղեկութիւնները տուեց։ Ամէն բան կարգին գտնուեցաւ։

—Դու վաղուց է այստեղ ես,—հարցրեց կայարանապետը։

—Մայիսի 2-ից, ձերդ ազնուութիւն։

—Շատ լաւ։ Ապրիս։ Իսկ 164 համարում ով է։

Ճանապարհի վարպետը (որը նոյնպէս կայարանապետի հետ էր) պատասխանեց.—Վասիլի Սպիրիդոնովն է։

—Սպիրիդոնով, Սպիրիդոնով....—Ը՛ը՛ը՛, դա ա՞յն Սպիրիդոնովն է, որը անցեալ տարի ձեր նկատողութեան տակ էր ընկել։

—Այո, հէնց նա ինքն է։

—Դէ լաւ, կը տեսնենք Վասիլի Սպիրիդոնովին էլ։—Դէհ, առա՛ջ։

Մշակները դրեզինայի կոթը պտըտեցին, և նա առաջ սլացաւ։

Սիմէօնը նայում էր դրեզինայի ետևից ու ինքն իրան մտածում.—Էհ, հիմա էլ հարևանիս ջանին կը չոքեն։

Երկու ժամից յետոյ նա գնաց ճանապարհը դիտելու. յանկարծ տեսնում է փոսից մէկը դուրս գա-

լով՝ ճանապարհով գալիս է և գլխին մի ինչոր սպիտակ բան է երևում։ Սիմէօնը աւելի ուշադրութեամբ դիտելով՝ տեսաւ, որ Վասիլին է, ձեռքին մի փայտ, կռնակի տակ մի կապոց, երեսն էլ թաշկինակով կապած։

—Հարևան, յառաջ բարի.—կանչեց Սիմէօնը։

Վասիլին բոլորովին մօտեցաւ։ Պատկերը բոլորովին փոխուած, սպիտակ ինչպէս կաւիճ, աչքերը վայրենացած. ուզեց խօսել, ձայնը կտրուեցաւ։

—Գնում եմ Մոսկուա, ասաց նա..... վարչատուն։

—Վարչատո՞ւն.... ա՛յ քեզ բան, ուրեմն գանգատ անելո՞ւ ես գնում։ Արի թող, Վասիլի Ստեփանիչ, մոռացիր....

—Չէ, եղբա՛յր, երբէ՛ք չեմ կարող մոռանալ. մոռանալն էլ անկարելի է։ Տեսնո՞ւմ ես, ցոյց տալով երեսի վէրքը, խփեց՝ այսպէս արնաթաթախ արաւ.... Ախ, խփելով կրծքին, քանի շունչս վերաս է՝ չեմ մոռանալ, ես այսպէս չեմ թողնիլ։

Սիմէօնը բռնելով նորա ձեռքից՝ ասաց.

—Թող, Վասիլի, ճշմարիտն եմ ասում քեզ, ոչինչ չի դուրս գալ այդ բանից։

—Ի՞նչ բան. ես ինքս գիտեմ, որ ոչինչ չի դուրս գալ, բայց, եղբա՛յր, պէտք է ճշմարտութիւնը պաշտպանել։

—Բայց դեռ ասա խնդրեմ, այդ ի՞նչպէս եղաւ. ինչ էր պատճառը։

—Ահա թէ ինչ էր պատճառը։ Կայարանապետը իջաւ իմ դիտանոցի մօտ, դիտեց բոլորը....

ներս մտաւ և իմ անակը։ Ես արդէն առաջուց գիտէի, որ շատ խիստ պիտի հարց ու փորձ անէր, ուստի հարկաւոր կարգադրութիւնն արել էի։ Հէնց որ ուզում էր ճանապարհ ընկնել, ես իմ գանգատով առաջ անցայ։ Գանգատս լսելուն պէս՝ նա գոռաց վերաս. «Այստեղ, ասաց նա, կառավարութեան կողմից քննութիւն է, այսպէս—այնպէս, իսկ դու բանջարանոցիդ մասին ես գանգատւում. այստեղ շուտով գաղտնի խորհրդականներ են գալու, իսկ դու քո կաղամբի ցաւն ես քաշում։ Ես չը սխալուեցայ՝ մի խօսք ասացի, այն էլ ոչ վիրաւորական, բայց նա վիրաւորական ընդունելով՝ սուր հա կը տաս՝ ուղիղ երեսիս.... Իսկ ես մնացի սառած կանգնած, կարծես թէ՝ հէնց այդպէս էլ հարկաւոր էր։ Նորանց գնալուց յետոյ, ես ուշքի եկայ, լուացի երեսիս արիւնը ու ճանապարհ ընկայ։

—Հապա քո դիտանոցը։

—Կինս մնաց, նա ուշադիր է, կը հսկէ. էհ, նորանցն էլ ու նորանց ճանապարհն էլ.... Կանգնեց Վասիլին, պատրաստուեցաւ ճանապարհ ընկնելու.— Յաւէսութիւն, Իվանիչ։ Չը գիտեմ, կարող եմ գլուխս կառավարչութիւնը, թէ ոչ։

—Մինթէ ոտքով պիտի գնաս։

—Կայարանում կը խնդրեմ, որ բեռնակիր գնացքի վերայ նստացնեն. կարծում եմ, վաղը Մոսկուա կը լինեմ։

Հարևանները մնաս բարև ասացին իրար։ Գնաց Վասիլին և երկար ժամանակ չ'երևեցաւ։ Կինը նորա

տեղ աշխատում էր, գիշեր—ցերեկ չէր քնում, հալ ու մաշ էր լինում խեղճը սպասելով մարդուն։ Երրորդ օրը եկան բարձրաստիճան հիւրերը երկաթուղով, որը բաղկացած էր շոգեմեքենայից, մի բեռնակիր և առաջին կարգի երկու մարդակիր վագոններից, բայց Վասիլին չը կար ու չը կար։

Չորրորդ օրը Սիմէոնը տեսաւ Վասիլի կնոջը, որի երեսը արտասուքից ուռել, աչքերը կարմրել էին։

—Վերադարձաւ ձեր մարդը,—հարցրեց նա։

Կինը շարժեց ձեռքը ու ոչինչ չը պատասխանելով՝ ճանապարհ ընկաւ դէպի իւր տունը։

Սիմէոնը երեխայութեան ժամանակից սովորել էր եղեգներից սրինգներ շինել։ Հանում էր եղեգնի միջուկը, լաւ մաքրում, ուր հարկաւոր էր ծակեր էր բաց անում, ծայրին լեզուակ էր դնում ու այնպիսի մի կարգին բան էր լինում, որ ինչ ցանկանար մարդ կարող էր վրան նուագել։ Ազատ ժամերին նա շատ սրինգներ էր շինում և ապրանքակիր գնացքների վերայ ծառայող ծանօթ կոնդուկտորների միջոցաւ ուղարկում էր քաղաք ծախելու։ Հատը երկու կոպեկով քաղաքում հեշտութեամբ ծախւում էր։ Քննութիւնից (ревизія) երեք օր յետոյ՝ Սիմէոնը թողեց տանը իւր կնոջը, որ երեկոյեան վեց ժամին անցնող գնացքին դիմաւորէ, իսկ ինքը դանակը առնելով գընաց անտառ՝ իւր համար սրնգացուներ կտրելու։ Նա հասաւ իւր մասի վերջը, ուր ճանապարհը ուղղակի

ծուում էր դէպի անտառը։ Ցած դնալով երկաթագծից՝ սարի տակի անտառի միջով առաջ էր գնում։ Կէս վերստի վերայ մի մեծ ճահիճ կար, որի մօտ բուսած էին ամենալաւ թփեր նորա սրնգացուների համար։ Սիմէօնը կտրտեց մի ամբողջ խուրձ իւր ուզած սրնգացուներից և կռնակն առած՝ վերադարձաւ տուն։

Անցնում էր անտառով. արևն արդէն խոնարհուել էր դէպի արևմուտք. ամէն տեղ տիրում էր խորին լռութիւն, միայն լսւում էին թռչունների կամացուկ ծլըլտոցը և ոտների տակ կոտրատուող խռիւների ճրթճրթոցը։ Սիմէօնը միքիչ էլ առաջ անցաւ և ահա երկաթագիծը։ Սակայն նորան թւում էր թէ էլի մի ինչ որ ձայն է լսւում, կարծես թէ մի տեղ երկաթը երկաթին էին խփում։ Սիմէօնը քայլերը արագացրեց։ Այդ միջոցում նորա մասում նորոգելու ոչինչ չը կար։ «Ի՞նչ պէտք է լինի այս», մտածում էր նա։ Ահա դուրս եկաւ նա անտառից. նորա առաջ բարձրանում էր երկաթուղու զառիվայրը, որի բարձրութեան վերայ նստած էր մի մարդ և ինչ որ անում էր։ Սիմէօնը սկսեց կամաց կամաց բարձրանալ դէպի նա. նա մտածում էր. «Երևի պտուտակները գողանալու է եկել։» Մարդը վերկացաւ իւր տեղից, Սիմէօնը տեսնում է. նա ձեռքին լինդ ունի։ Ահա նա լինդը երկաթէ ձողակի տակը խրեց և ամենայն ոյժով հրեց մի կողմ։ Սիմէօնի աչքերը սևացան. ուզեց ձայն տալ՝ չը կարողացաւ։ Նա Վասիլին էր։ Սիմէօնը արագ վազեց վերև. իսկ նա լինդն ու բանալին ձեռքին զա-

ռիվայրի միւս կողմից գլորուելով գնաց ցած։ Սիմէօնը սարսափած սկսեց կանչել։—Վասիլի Ստեփանիչ, բարեկամս, աղաչում եմ, վերադարձիր, բէր լինդը, ձողակը իւր տեղը դնենք, ոչ ոք չի իմանալ, մի՛ վախիր. վերադարձիր, խնդրում եմ, աղաչում եմ, մեղքի տակ մի՛ ընկնիլ։

Սակայն Վասիլին յետ անդամ չը նայեց. ուղղակի գնաց անտառ։ Սիմէօնը մնաց շուարած կանգնած տեղահան արած ձողակների մօտ։ Թուլացան նորա ձեռքերը. սրնգացուների կապոցը վայր ընկաւ ձեռքից։ Շուտով պիտի անցնէր երկաթուղու գնացքը և այն էլ ոչ սպրանքակիր գնացքը, այլ մարդակիր. ինչ հնարք գործ դնէր, ինչով կանգնացնէր նորան. դրօշակ չը կար, ոչ էլ ձողակը իւր տեղը դցելու հնար։ Դատարկ ձեռքով խօմ չէր կարելի պտուտակներն ամրացնել։—Պէտք է վազել, անպատճառ պէտք է վազել դիտանոցը, մի որ և է գործ/ք բերել։ Ո՞հ, Աստուած իմ, օգնիր ինձ։

Սիմէօնը վազում է դէպի դիտանոցը. նորա շունչը կտրում է, քիչ է մնում վայր ընկնի. բայց էլի դուրս է վազում անտառից։ Մինչև դիտանոցը շատ քիչ էր մնացել, ընդ ամենը հարիւր սաժէն. բայց ահա նա յանկարծ լսում է շոգեկառքի սուլոցի ձայնը։ Ուրեմն 6 ժամն է. իսկ վեցից 2 րոպէ անց՝ պէտք է անցնի գնացքը։ Ո՞հ, Տէր Աստուած, ազատիր անմեղների հոգին այս անբաղդութիւնից։ Սիմէօնի աչքի առաջ պարզ ներկայանում էր դժբաղդութեան սոսկալի տեսարանը ամենասարսափելի գոյներով։ Ահա

շոգեկառքի ձախ անիւը կպչում է ձողակի կտրին, ցնցում է, սկսում է ցրիւ տալ գերանները ու ջարդ ու փշուր անել։ Ահա վագոնները երկաթէ ձողակներից դուրս գալով իրար են դիպչում, տասն և մէկ սաժէնաչափ բարձրութիւնից ներքև են թափւում. իսկ վագոնների երրորդ կարգերը լցուած են մեծ ու փոքր մարդկերանցով, ասեղ գցելու տեղ չը կայ.... Բայց Նոքա այս բոպէիս հանգիստ նստած, չը գիտեն թէ ինչ սարսափելի թշուառութիւն է սպասում իրենց։ Ո՜հ, Տէր Աստուած, դու ինձ մի միտք շնորհիր, մի հնար ցոյց տուր....Ո՛չ, անկարելի է տնակն հասնել և ժամանակին կրկին վերադառնալ. անկարելի է, ո՜հ, անկարելի է.....

Սիմէօնը դեռ դիտանոցը չը հասած՝ շուռ եկաւ ու սկսեց աւելի ևս արագ վազել դէպի տեղահան արած ձողակները։ Նա վազում էր խելագարուածի պէս, ինքն էլ չ՝իմանալով թէ ինչ պէտք է լինի։ Ահա նա հասաւ տեղահան արած երկաթէ ձողակներին։ Այնտեղ ընկած էին սրնգացուների փայտերը։ Նա կռացաւ, վերցրեց մի հատ նորանցից, ինքն էլ չ՝իմանալով թէ ինչու համար։

Նա առաջ վազեց։ Նորան թւում էր, որ արդէն գնացքը մօտենում է, հեռուից լսում է սուլոցի ձայնը. լսում է թէ ինչպէս ձողակները կամացուկ ու մեղմ դժժում են. էլ առաջ վազելու ոյժ չը կար։ Նա յուսահատուած կանգնեց սոսկալի տեղից հարիւր սաժէնաչափ հեռաւորութեան վերայ. այստեղ յանկարծ մի միտք լոյսի պէս փայլեց Նորա գլխում։ Նա վերցրեց գլխարկը, հանեց Նորա միջից մի չթէ թաշկինակ, կօշկի միջից էլ դանակը հանեց, ապա խաչակնքելով երեսը՝ բացականչեց. «Տէր Աստուած, ողորմած եղիր թշուառիս»։

Եւ ապա դանակով խփեց իւր թևի արմունկից բարձր ամենափափուկ տեղին։ Տաք արիւնը դուրս ցատկեց և սկսեց քլքլալայ թափուել։ Նա թաշկինակը շաղախեց արեան մէջ, փռեց, կապեց փայտի ծայրին և իւր կամիր դրօշակի փոխարէն առաջ պարզեց։

Սիմէօնը կանգնած է և շարժում է իւր դրօշակը։ Ահա գնացքը երևաց։--Ո՜հ, եթէ յանկարծ մեքենայապետը չը տեսնէ ինձ, սարսափելի՛ տեսարան.... գնացքը կը մօտենայ, իսկ հարիւր սաժէնաչափ հեռաւորութիւնից՝ անկարելի է այդ վիթխարի գնացքը կանգնեցնել։

Սիմէօնի թևից արիւնը անդադար հոսում է ու հոսում։ Նա վերքը սեղմում է կողքին, ուզում է կապել վերքի բերանը, բայց ի զուր, արիւնը չի դադարում. երևում է, որ շատ խորն է վիրաւորել։ Գլուխը սկսում է պտտուել, աչքերը պլտորուում են, յետոյ բոլորովին մթնում են. ականջները սարսափելի թշշում են, նա էլ չի տեսնում գնացքը, էլ չի լսում Նորա ձայնը. նա մի բան է մտածում. «Ոտքիս վերայ չեմ դիմանալ, վայր կ՝ընկնեմ, դրօշակը կ՝ընկնի գետին, գնացքը կ՝անցնի մօտովս.... Ո՜հ, Աստուած, ազատիր ինձ այս փորձանքից»։

Խեղճն իսկ որ չը կարողացաւ դիմանալ ոտքի վերայ. Նորա աչքերը մթնեցան, սիրտը նուաղեց և

դրշակը ձեռքին թուլացաւ։ Սակայն արիւնաթաթախ դրշակը չ'ընկաւ գետին. մէկի ձեռքն իսկոյն բռնեց և վեր բարձրացրեց առաջ եկող գնացքի դիմաց։ Մեքենայապետը նկատեց կարմիր դրշակը, իսկոյն ծածկեց կանոնիչը (регуляторъ) և ամենայն միջոցով մեղմացրեց գնացքի ընթացքը։ Գնացքը կանգ առաւ։

Մարդիկ վախեցած դուրս թափուեցան վագոնից և խառնուեցան մի տեղ. տեսնում են երկաթգծի մօտ ուշաթափ և արիւնլուայ ընկած է մի մարդ. իսկ մի ուրիշը կանգնած է նորա կողքին, արիւնաներկ փաչասով փայտը ձեռքին։

Վասիլին մի հայեացք ձգեց խմբուած ճանապարհորդների վերայ ու գլուխը կախ դցեց։—Կապեցէք ինձ, շշնջաց նա, ձողակները ես տեղահան արի։

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ա. Публичная Библиотека
7/XI—1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3403

2013